# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ «ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ, ԴՐԱ ՀԱՐՈՒՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ» ԹԵՄԱՅՈՎ

**20.01.2023 11:14**

***Հարգելի՜ փաստաբաններ,***

23.01.2023թ. ժամը 18:30-21:30-ին ՀՀ փաստաբանների պալատի դահլիճում տեղի է ունենալու վերապատրաստման դասընթաց **«Վարչական վարույթը, դրա հարուցման եղանակները և ընթացակարգը»** թեմայով:

*Միաժամանակ հայտնում ենք, որ հրավիրված դասընթացին կարող եք մասնակցել նաև հեռավար եղանակով, որի մասին պարտադիր անհրաժեշտ է նշել գրանցման վերաբերյալ Ձեր նամակում:*

- Դասընթացը կվարի ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր Կարեն Ավետիսյանը,
- Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ մինչև 23.01.2023թ. ժամը 14:00-ն՝ պատասխան նամակ ուղարկելով training.coordinator@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին, որտեղ անհրաժեշտ է նշել տվյալ դասընթացի թեման,  Ձեր անունն, ազգանունը և արտոնագրի համարը,
- Յուրաքանչյուր դասընթացին մասնակցությունը կհաշվարկվի պարտադիր վերապատրաստման 4 (չորս) ակադեմիական ժամ:

**Ուշադրություն. Հեռավար դասընթացը կանցկացվի Google meet հավելվածի միջոցով, որի մասնակցության հրավերը կստանաք ձեր էլեկտրոնային փոստի հասցեին՝ գրանցվելուց հետո:**

**Միաժամանակ խնդրում ենք հարթակին միանալիս նշել Ձեր անունը, ազգանունը և արտոնագրի համարը՝ Ձեր մասնակցությունը հաշվառելու և հարթակում շփվելու համար:**

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })